**Երևանի պետական համալսարանում գործող**
**Բարձրագույն որակավորման կոմիտեի (ԲՈԿ)**
**իրավագիտության 001 մասնագիտական խորհրդին**
*հասցե՝ ՀՀ 0025, Երևան, Ալեք Մանուկյան փողոց, թիվ 1*

**Կ Ա Ր Ծ Ի Ք**

**ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ԸՆԴԴԻՄԱԽՈՍԻ՝ ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԴՈԿՏՈՐ, ՊՐՈՖԵՍՈՐ ԱՐՄԵՆ ՀԱՅԿՅԱՆՑԻ**

***ԺԲ.00.03- Մասնավոր իրավունք (քաղաքացիական, առևտրային (կոմերցիոն), միջազգային մասնավոր, ընտանեկան, աշխատանքային, սոցիալական ապահովության իրավունք) մասնագիտությամբ իրավաբանական գիտությունների թեկնածուի գիտական աստիճան հայցելու համար ներկայացված Աշխեն Մանվելի Սողոմոնյանի «Տնտեսական ընկերությունների լուծարման իրավական կարգավորման հիմնահարցերը ՀՀ-ում» թեմայով ատենախոսության և սեղմագրի վերաբերյալ***

Ատենախոսական աշխատանքը նվիրված է Հայաստանի Հանրապետությունում տնտեսական ընկերությունների լուծարման իրավական կարգավորման հիմնահարցերի ուսումնասիրությանը և վերլուծությանը: Շուկայական հարաբերությունների հիմնական մասնակիցները իրավաբանական անձինք են՝ մասնավորապես տնտեսական ընկերությունները, որոնց պատշաճ գործունեությունից է կախված երկրի տնտեսական համակարգի կայունությունը: Տնտեսական ընկերությունների իրավական վիճակն ամրագրող նորմերի մի մասն էլ վերաբերում է դրանց լուծարմանը: Այս գործընթացի պատշաճ իրականացումը շատ կարևոր է ինչպես այդ ընկերության պարտատերերի, այնպես էլ ընկերության մասնակիցների համար, հետևաբար այդ օրենսդրական նորմերի կատարելագործումն ունի կարևոր պրակտիկ նշանակություն: Վերը նշվածից բացի թեմայի արդիականությունը պայմանավորված է մի շարք այլ կարևոր գործոններով, մասնավորապես ՀՀ քաղաքացիական օրենսգրքի, տնտեսական ընկերությունների վերաբերյալ այլ ճյուղային օրենքների ուսումնասիրությունը վկայում է, որ իրավաբանական անձանց, այդ թվում՝ տնտեսական ընկերությունների լուծարման

հիմքերի և ընթացակարգի կարգավորմանն ուղղված մի շարք իրավական նորմեր ոչ լիարժեք են և ամբողջությամբ չեն կարգավորում լուծարման ընթացքում ծագող իրավահարաբերությունները: Մասնավորապես իրավաբանական անձանց լուծարման կամավոր և հարկադիր հիմքերը ներկայացվում են ՀՀ քաղաքացիական օրենսգրքի նույն հոդվածի շրջանակներում՝ թույլ չտալով իրականացնել դրանց տարանջատում: Բացի այդ, հաշվի առնելով ՀՀ օրենսդրության մեջ վերջերս տեղի ունեցած փոփոխությունները տնտեսական ընկերությունների հարկադիր լուծարման՝ ՀՀ քաղաքացիական օրենսգրքում տեղ գտած հիմքերը կարելի է դիտարել կարծրացած և ներկայիս զարգացումներին չհամապատասխանող: Ինչ վերաբերում է իրավաբանական անձանց լուծարման ընթացակարգին, ապա կարելի է նշել, որ ՀՀ օրեսդրությամբ այն ամբողջապես կարգավորված չէ, և մի շարք հարցեր մնացել են օրենսդրի ուշադրությունից դուրս՝ հագեցնելով մի շարք պրակտիկ խնդիրների:

Ատենախոսական աշխատանքի ուսումնասիրության շրջանակներից իրավացիորեն դուրս է մնացել սնանկության հիմքով տնտեսական ընկերությունների լուծարման ուսումնասիրությունը, քանի որ դա ուսումնասիրության առանձին ոլորտ է և պահանջում է մանրամասն վերլուծություն:

Հեղինակը կատարել է տնտեսական ընկերությունների լուծարման ինստիտուտի համապարփակ, խորը և համակողմանի գիտագործնական վերլուծություն: Ուսումնասիրվել է անհրաժեշտ քանակությամբ տեսական գրականություն, ինչպես նաև տարբեր երկրների՝ ոլորտի կարգավորմանն ուղղված բազմաթիվ օրենսդարական ակտեր: Այս համատեքստում հեղինակը անդրադարձել է Հայաստանում իրավաբանական անձանց լուծարման ինստիտուտի զարգացման պատմությանը, ուսումնասիրել է իրավաբանական անձանց լուծարման և դրա դադարման հարաբերակցությունը՝ վերլուծելով նաև իրավաբանական անձանց դադարման մյուս ձևերը: Արդյունքում հեղինակն առաջարկել է ՀՀ օրենսդրությամբ ամրագրել իրավաբանական անձանց դադարման հասկացությունն ու ձևերը սահմանող կարգավորումներ, ինչպես նաև ներդնել փաստացի դադարած իրավաբանական անձանց՝ իրավաբանական անձանց պետական միասնական գրանցմատյանից հանելը որպես իրավաբանական անձի ՀՀ օրենդրությամբ մինչ այդ չնախատեսված, սակայն միջազգային պրակտիկայում լայնորեն կիրառվող դադարման ձևը:

Հեղինակը մանրամասն քննարկման առարկա է դարձրել տնտեսական ընկերությունների լուծարման հիմքերը՝ տարանջատելով դրանք կամավորի և հարկադիրի, կատարել արժեքավոր իրավահամեմատական վերլուծություն՝ համեմատելով իրավաբանական անձանց լուծարման՝ ՀՀ օրենսդրությամբ և այլ երկրների օրենսդրությամբ նախատեսված հիմքերը: Արդյունքում՝ հեղինակն ատենախոսության 74-րդ էջում ձևակերպել է տնտեսական ընկերությունների հարկադիր լուծարման հասկացությունը, իսկ 83-84-րդ էջերում համապատասխան տեսական հիմնավորումների հիման վրա ներկայացրել օրենսդրական փոփոխությունների կարևոր առաջարկ, որը վերաբերում է իրավաբանական անձանց, այդ թվում՝ տնտեսական ընկերությունների հարկադիր լուծարման հիմքերը առաձին հոդվածի շրջանակներում կարգավորելուն: Այնուհետև հեղինակը անհրաժեշտաբար քննարկման առակա է դարձրել տնտեսական ընկերությունը լուծարելու մասին ընդհանուր ժողովի որոշման իրավական բնույթը, դրա բողոքարկման կարգը, ժամկետները և նման իրավունք ունեցող սուբյեկտների շրջանակը: Այդ հարցի կապակցությամբ հեղինակը ուսումնասիրել է տարբեր տեսաբանների կարծիքներ և տարբեր երկրներում առկա մոտեցնումներ, և դրանք համադրելով, հանգել այն հետևության, որ լուծարման մասին ընդհանուր ժողովի որոշումը ներքին կորպորատիվ իրավական ակտ է (էջ 105):

Հեղինակը ատենախոսության հետագա շարադրանքում անդրադարձել է տնտեսական ընկերությունների լուծարման ընթացքում օրենսդրական թերի կարգավորումներով պայմանավորված մի շարք կարևոր խնդիրների համակողմանի ուսումնասիրության, մասնավորապես՝ լուծարման հանձնաժողովի իրավական բնույթին, դրա անդամների գործառույթներին, նրանց նշանակմանը և լիազորությունների դադարեցմանը: Արդյունքում հեղինակը մշակել է այդ խնդիրների լուծմանն ուղղված կարևոր օրենսդրական առաջարկ (130-131 էջեր), որը կարող է կիրառվել հետագա օրենսդրական փոփոխությունների ժամանակ և ծառայել այդ խնդրի լուծմանը:

Հեղինակը մանրամասն անդրադարձել է նաև տնտեսական ընկերությունների լուծարման ողջ ընթացակագին՝ մանրամասն տեսական և գործնական վերլուծության ենթարկելով այդ ընթացակարգի մասը հանդիսացող յուրաքանչյուր գործողություն: Հեղինակն այդ ընթացակարգի վերլուծությունը համակարգված ներկայացնելու նպատակով այն բաժանել է մի քանի փույլերի՝ դրա պրակտիկ անհրաժեշտությունը կապելով այն հանգամանքի հետ, որ այդպիսով կարելի է ամեն փուլի ընթացքում

կայացված որոշման բողոքարկման վերջնաժամկետը պայմանավորել կոնկրետ փուլի ավարտով:

Ատենախոսության ողջ շարադրանքում հեղինակը կատարել է կարևոր գիտա-պրակտիկ նշանակություն ունեցող եզրահանգումներ, մշակել է տեսական հասկացություններ և ներկայացրել օրենսդրական բարեփոխումների արժեքավոր առաջարկներ:

Ատենախոսությունը բաղկացած է ներածությունից, երեք գլուխներից, ութ պարագրաֆներից, եզրակացությունից, ինչպես նաև օգտագործված գրականության ցանկից:

Ատենախոսության մանրամասն ուսումնասիրությունը վկայում է, որ հեղինակը կատարել է թեմային նվիրված համալիր և ավարտուն աշխատանք՝ օգտագործելով դիալեկտիկական, ձևական-իրավական, համեմատական-իրավական և գիտական այլ մեթոդներ: Բացի այդ հեղինակի կողմից ներկայացված նկատառումներն ու դիտարկումները շատ արժեքավոր են, և հաստատապես կարելի է փաստել, որ հեղինակը կարողացել է ներկայացնել գիտական պատշաճ մակարդակ ունեցող աշխատանք:

Աշխատանքի հիմնական դրույթները արտացոլված են հեղինակի կողմից հրապարակված թվով 8 գիտական հոդվածներում, ինչպես նաև սեղմագրում: Ատենախոսության և սեղմագրի ծավալն ու ձևավորումը համապատասխանում են ԲՈԿ-ի կողմից սահմանված կանոններին:

Միևնույն ժամանակ, ինչպես ցանկացած աշխատանք, այնպես էլ ուսումնասիրված ատենախոսությունը, զերծ չէ վիճելի դրույթներից և որոշ թերություններից, որոնք կայանում են հետևյալում.

1. Պաշտպանության ներկայացվող դրույթներից 3-րդ կետի ներքո արտացոլված դատողությունները, մեր կարծիքով, բավականաչափ հիմնավորված չեն: Այսպես, անդրադառնալով իրավաբանական անձանց կամավոր լուծարման հասկացությանն ու նման որոշում կայացնելու պայմաններին, հեղինակը նշում է, որ նման որոշում կարելի է ընդունել, եթե լուծարվող իրավաբանական անձն ի վիճակի է բավարարել իր պարտատերերի պահանջները, ինչպես նաև պարտապաններից կարող է պահանջել պարտավորության վաղաժամկետ կատարում: Նախ, պետք է նշել, որ լուծարվող ընկերությունը նախապես չի կարող կամ պարտավոր չէ իմանալ իր ունեցած բոլոր պարտավորությունների մարման հնարավորության մասին տեղեկատվություն, այդ

իսկ պատճառով էլ «Սնանկության մասին» ՀՀ օրենքի 5-րդ հոդվածով նախատեսված է, որ պարտապան իրավաբանական անձի լուծարման հանձնաժողովը (լուծարողը) պարտավոր է պարտապանին սնանկ ճանաչելու դիմում ներկայացնել դատարան, եթե լուծարման ժամանակ պարզվում է, որ լուծարվող իրավաբանական անձի գույքի արժեքն անբավարար է պարտատերերի պահանջներն ամբողջովին բավարարելու համար: Հետևաբար կամավոր լուծարման վերաբերյալ որոշում ընդունելու նման նախապայման սահմանելը վիճելի է: Բացի այդ, հեղինակը նշում է նաև, որ ընկերությունը կամավոր լուծարելու մյուս պայմանը իր պարտապաններից պարտավորությունների վաղաժամկետ կատարում պահանջելն է, ինչը նույնպես տարակարծությունների տեղիք է տալիս, քանի որ չի կարելի ՀՀ քաղաքացիական օրենսդրությամբ նախատեսված գործելակերպի ազատության սկզբունքը սահմանափակել նման անհարկի միջամտություններով: Ընդհանրապես՝ մեք գտնում ենք, որ եթե իրավաբանական անձի ընդհանուր ժողովն ընդունել է լուծարման կամավոր որոշում, վերջինս չի կարող պայմանավորվել որևէ պայմանի առկայությամբ, և քաղաքացիական շրջանառության մասնակիցներին պետք է հնարավորության տալ կամովին որոշել իրենց հետագա գործունեության ընթացքը:

2. Ատենաախսության 115-116-րդ էջում հեղինակն առաջարկել է իրավաբանական անձի ընդհանուր ժողովի լիազորությունների շարքում ավելացնել կամավոր լուծարման գործընթացը դադարեցնելու վերաբերյալ որոշում ընդունելու իրավունքը: Կարծում ենք, որ նման առաջարկի իրականացումը խնդրահարույց է, քանի որ այդ իրավասության առկայությունը կարող է տնտեսվարող սուբյեկտներին հնարավորություն ընձեռել պարտապաններից պարտավորությունների վաղաժամետ կատարում պահանջելուց հետո ձեռք բերել շահավետ տնտեսական դիրք, դադարեցնել լուծարման գործընթացը և վերադառնալ բնականոն տնտեսական գործունեության:

3. Հաշվի առնելով այն հանգամանքը, որ հեղինակն ատենախսության տարբեր մասերում ներկայացրել է օրենսդրական փոփոխությունների առաջարկներ, աշխատանքը կշահեր, եթե հեղինակը համակարգեր դրանք և, որպես ՀԱՎԵԼՎԱԾ, ներկայացներ առաջարկվող օրենքներում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին նախագիծ:

Այս ամենով հանդերձ, պետք է նշել, որ ներկայացված նկատառումները չեն արժեզրկում, ընդհանուր առմամբ, հաջողված ատենախոսությունը և պայմանավորված են աշխատանքն առավել կատարյալ տեսնելու ցանկությամբ:

Աշխեն Սողոմոնյանի ատենախոսությունը բնութագրվում է ներքին ամբողջականությամբ, հանդիսանում է արդիական, տեսական և գործնական առումով՝ արժեքավոր: Այն շարադրված է գրագետ հայերենով, աչքի է ընկնում ինքնուրույն ձևակերպումների և սեփական դատողությունների առատությամբ:

Վերը շարադրվածը հիմք է տալիս եզրակացնելու, որ Աշխեն Մանվելի Սողոմոնյանի «Տնտեսական ընկերությունների լուծարման իրավական կարգավորման հիմնահարցերը ՀՀ-ում» թեմայով ատենախոսությունն իրենից ներկայացնում է համակարգային, համալիր և ավարտուն հետազոտություն:

Ընդդիմախոսության ներկայացված ատենախոսությունը համապատասխանում է ԺԲ.00.03 <<Մասնավոր իրավունք>> մասնագիտությանը (քաղաքացիական, առևտրային (կոմերցիոն), միջազգային մասնավոր, ընտանեկան, աշխատանքային, սոցիալական ապահովության իրավունք), բավարարում է ՀՀ կառավարությա 1997 թվականի օգոստոսի 8-ի թիվ 327 որոշմամբ հաստատված «ՀՀ-ում գիտական աստիճանաշնորհման կանոնակարգի» 7-րդ կետի պահանջներին, իսկ հեղինակն արժանի է «Իրավաբանական գիտությունների թեկնածու» գիտական աստիճանի շնորհման:

**ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԴՈԿՏՈՐ, ՊՐՈՖԵՍՈՐ՝** **Ա.ՀԱՅԿՅԱՆՑ**

*01.11.2021թ.*

*«Ա. Հայկյանցի ստորագրության իսկությունը հաստատում եմ»՝*

**ԵՊՀ ԻՐԱՎԱԳԻՏՈՒԹՅԱՆ ՖԱԿՈՒԼՏԵՏԻ ԴԵԿԱՆԻ ՏԵՂԱԿԱԼ՝**

**ԴՈԿՏՈՐ, ՊՐՈՖԵՍՈՐ՝**

**Հ. ԽԱՉԻԿՅԱՆ**